ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---»----------2025թ. **N------ Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի քաղաքային թափոնների կառավարման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևանի քաղաքապետարանի տեղական քաղաքային թափոնների կառավարման ծրագիրը մեկնարկային ռազմավարական փաստաթուղթ է այս ոլորտում, որը սահմանում է քաղաքային թափոնների կառավարման նպատակները՝ համաձայն ՀՀ կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման 2017-2036թթ. ռազմավարության և ռազմավարությունից բխող 2021-2023թթ. միջոցառումների ծրագրի և թափոնների կառավարման ոլորտում ԵՄ հիմնական դիրեկտիվների իրականացման պլանների: Ծրագիրը հաշվի է առնում բոլոր տեսակի քաղաքային թափոնները և դրանց մշակման մեթոդները, որոնք համապատասխանում են թափոնների համապարփակ կառավարման և կայուն զարգացման սկզբունքներին: Երևանի քաղաքային թափոնների կառավարման ծրագիրը կազմված է 2025-2029 թթ. ժամանակահատվածի համար: Այն սահմանում է Երևանի քաղաքապետարանում թափոնների կառավարման ներկայիս իրավիճակի վերլուծությունը, ինչպես նաև ձեռնարկվելիք միջոցառումները՝ բարելավելու էկոլոգիապես և տնտեսապես կայուն քաղաքային թափոնների կառավարումը, նախապատրաստվելով վերաօգտագործմանը, վերամշակմանը, օգտահանմանը և քաղաքային թափոնների հեռացմանը:

Ելնելով վերոգրյալից ներկայացված Նախագծով առաջարկվում է հաստատել Երևան քաղաքի քաղաքային թափոնների կառավարման ծրագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ